«Summer fest» համերգի տոմսերի խաղարկության արշավի մասնակցության պայմաններ

1. **Ներածություն**

1.1 Telcell Visa Digital տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://blog.telcell.am/ կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակում նվերները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.5 Հաղթող մասնակիցը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ Քարտապանի նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե Քարտապանը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների

անհամապատասխանություն, ապա տվյալ մասնակցի հաղթանակը կարող է չեղյալ համարվել:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի շրջանակում սույն թվականի հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը ներառյալ Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով Telcell Visa Digital թվային քարտ պատվիրելու դեպքում Քարտապանն ավտոմատ կերպով համարվում է արշավի մասնակից, ինչպես նաև ստանում է 5,000 «BON» գովազդային արշավի կանոններով սահմանված Bon պայմանական միավոր և ստանում է հնարավորություն մասնակցել Summer fest համերգի տոմսերի խաղարկությանը:
Պատահականության սկզբունքով 10 քարտապանները կճանաչվեն հաղթող և կստանան հետևյալ նվերներից որևէ մեկը (այսուհետ՝ Նվեր).

- Համերգի 1 տոմս

3.2 Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սույն Պայմաններով սահմանված Նվեր ըստ արշավի պայմանների:

3.3 Նվերն ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Նվերի որակի և մատուցված ծառայության համար:

3.5 Սույն Պայմանների 3.1 կետում նշված արշավի հաղթողը կորոշվի արշավի պայմաններով՝ Քարտի պատվերի գրանցում (մինչև 06/07՝ 00:00):

3.6 Արշավը կամփոփվի Telcell Wallet-ի ֆեյսբուքյան էջում՝ ուղիղ եթերում:

3.7 Արշավը կամփոփվի 08/07/2025-ին:

3.9 Հաղթող մասնակցի Telcell Visa Digital Քարտը Արշավի ընթացքում և ամփոփման պահին պետք է լինի գործող:

3.10 Արշավի հաղթողներին Նվերը տրամադրելու նպատակով Կազմակերպչի աշխատակիցը հեռախոսազանգի կամ էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի կամ SMS հաղորդագրության միջոցով կապ կհաստատի վերջինիս հետ:

3.11 Քարտապանները հնարավորություն ունեն Նվերը ստանալ մինչև 2025թ. Հուլիսի 10-ը: Նշված ժամկետից հետո Նվերն ենթակա չէ տրամադրման: Արշավի հաղթողները պարտավորվում են սույն կետում նշված ժամկետում անձամբ ներկայանալ Ընկերության գրասենյակ՝ ներկայացնելով անձը հաստատող վավեր փաստաթուղթ, ինչպես նաև պարտավորվում են տալ համաձայնություն՝ հրապարակել և տարածել հաղթողի անուն ազգանունը, տեսա-ձայնա-լուսանկարահանել Նվերն ու հաղթողին և արդյունքը հավաքագրել, պահպանել և տարածել՝ գովազդային և օրինական այլ նպատակներով: Սույն կետի խախտման դեպքում Նվերն ենթակա չէ հանձման հաղթողին:

3.12 «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Արշավի մասնակից:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: